# ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ՝ ՇՈՇՈՒՄ

*Կազմակերպությունն ընդլայնում է գործունեությունը*

«Արցախի կանայք» հասարակական կազմակերպությունն իր առջեւ նպատակ է դրել ունենալ մասնաճյուղեր հանրապետության տարբեր շրջաններում ու բնակավայրերում: Առաջինն այդ «բախտին» արժանացավ Ասկերանի շրջանի Շոշ գյուղը: Այս տարվա հոկտեմբերին կազմակերպության մի քանի անդամներ՝ նախագահ Ծովինար Բաղդասարյանի գլխավորությամբ եղան Շոշի Սարգիս Աբրահամյանի անունը կրող միջնակարգ դպրոցում: Հանդիպումը



մանկավարժական կոլեկտիվի հետ ջերմ էր ու անմիջական: «Արցախի կանայք» ՀԿ նախագահ Ծովինար Բաղդասարյանը ներկայացրեց այցելության նպատակը, մասնավորապես նշելով, որ այն միտված է կազմակերպության գործունեությունն ընդլայնելուն եւ գյուղական բնակավայրերում ապրող կանանց մտավոր եւ հոգեւոր-մշակութային մակարդակի բարձրացմանը: Ուստի, նա հանգամանալից ներկայացրեց կանանց միության ստեղծման նպատակներն ու խնդիրները, ծանոթացրեց կազմակերպության կանոնադրության առանձին դրույթներին: Չնայած կազմակերպությունը նորաստեղծ է, բայց այն հասցրել է ունենալ իր օրգանը՝ «Արցախի կանայք» թերթը, որի էջերում լայնորեն լուսաբանվում է միության գործունեությունը: Ծ. Բաղդասարյանը հանդիպման մասնակիցներին բաժանեց թերթի համարները եւ խոստացավ նրա էջերում տեղ հատկացնել շոշեցի ընկերուհիներին:

Կրթօջախի ուսուցչուհիները ողջունեցին եւ սիրով ընդառաջեցին կանանց հասարակական կազմակերպության նախաձեռնությունը: Տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակություն: Երկուստեք հանդես եկան իրենց հուզող հարցերով ու առաջարկություններով: Միության կատարած աշխատանքների եւ առաջիկա ծրագրերի մասին հակիրճ տեղեկատվությամբ հանդես եկան կազմակերպության անդամներ Լաուրա Գրիգորյանն ու Սմելա Սարուխանյանը:

Շոշի միջնակարգ դպրոցի ուսուցչուհիները «Արցախի կանայք» հասարակական կազմակերպությանը ներկայացրին գյուղի թոշակառու եւ բազմաերեխատեր մայրերի ցուցակները: Ծանոթանալով կազմակերպության նպատակներին եւ խնդիրներին՝ նրանք սիրով համաձայնեցին դառնալ կազմակերպության անդամներ, մասնակցել կազմակերպվող միջոցառումներին: Որպես մասնաճյուղի ղեկավար ընտրվեց Շոշի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Անժելա Պետրոսյանը:



***Սեփ. լրատվություն***